

Redaction de la Revue  
"Hautess Amsoya"  
2 Mechtaristengasse  
Cinquieme Année ZHAGHART SUR Autriche  
Vienne

ԳԱԶԻՒԷ 18 / 31 ՀՈՎՏԵՄԲԵՐ 1903

Խմբագրութեան վերաբերեալ հասարակելի գրութիւններ ուղղել կեանքի հայ հասցիին

Redaction du Journal  
«ARCHALOUYCE»  
Le Caire (Egypte)

# ԱՐՁԱԼՈՅՍ

Տէր ԵՒ ՏՆՈՐԷՆ  
Ե. ԲՈՒՐՆՈՅԵ  
Երան պատանակող Գաղտնիներ պէտ է ուղղել կեանքի հայցիին  
E. TROSSIAN  
Direct. - propr. du journal Arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

Խմբագրութեան ուղղում գրութիւնի  
ևս չի՛նք տալիս

Կ Ի Ս Ս Շ Ա Ր Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
ԱԶԳԱՅԻՆ. ԳՐԱԿԱՆ. ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՓՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Թի 417-18

ՔՍԱՆ ՓԱՐԱՑ ՈՂՁ

ՉՈՐԵՓՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Վեհախառն Հայաստանի Ծգոստոս ամսույ մէջ հետեւեալ Կ. Նիզակի քաղաքի և Ասորիսիս քաղաքի միջև ընկած Սահմանադրութիւնը:

## ՎՈՆԴԱԿ ԿԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հոգեւոր և Արիւստակէս Ս. Արքեպիսկոպոսին թեմակալ առաջնորդի վիճակի հայց Ասորիսիս և Սահմանադրութեան:

Ընկալաք յայտարարութիւն ի Կէրթոք Բէնի. Մարտի 17 ամսույ որով յայտարարեմք թեմակալին տեսնան Ասորիսիս, թարց (առանց) հրամանի և վերջնական հրահանգութեան յետոյ և մեր վախճանական կարգադրութեան, իրաւունքն ինքեան համարեալ և հրամայել բանի. բերանոյ անդաւոց իրող Սեդրաք քահանայի Ազարանեան և ինքեան Կէրթոք քահանայի, զնալ և ներկայ լինել ստացման գործողութեան կայնց և ստացածոց սրբոց Պետրոս Պօղոս եկեղեցւոյն Ասորիսիս: Մինչդեռ ձեր սրբազնութիւն ազգաբարեալ էք յետագիւղ զգործ ինչ ջղերադարձ ձեր յետ քանի ինչ աւուրց, բայց նոր քերթի թէ բանադատեալ ի սեղանական կառավարութեանն, և ոչ կընել զորոյն ծանրութիւն, անարի թուլամտութեամբ միջամտեալ են յանձնման գործոյն ի նկատ առեալ մեր այդ օրինակ յանգուզն և աններելի գործողութիւնն վիճակային տեսնին Ասորիսիս, որ ի վեր քան զիրաւունք իր միջամտեալ է այնպիսի գործողութեան ոչ վասն մեք ցարգ քրտնալան աքեմք հանդերձ միաբանութեամբ ուստիս սակա հայցելոյ զարքադոյն շորն Նորին Կայսերական Մեծութեան առ դարաւոր իրաւունք Հայաստ. Սե. Եկեղեցւոյ. Արք. մեք իբրև ընդհանրական Հայրապետ և ընդհանր վերահաստատել համայն պաշտօնէնց մեր եկեղեցւոյ, առ այդ օրինակ արարս վիճակային տեսնին Ասորիսիս, հրամայեմք կոնգրակաւ այսու ձեր բարձր Սրբազնութեան կատարել զյետագայ իբրև թեմակալ նոյն վիճակին:

Ա. — Հրամայել փոխանորդին Ղզլբայ վարդապետին զնալ յԱսորիսիս, արձակել զքահանայ անդամ ի պաշտամանն անդամակցութեան և նշանակել նոր անդամ ի տեղի արձակելոյն, և զաղբեցուցանել զարձակեալն ի քահանայագործութեանն, անորոյ ժամանակաւ: Յանձնելով զմիտնորայն այլ քահանայից, և յետ առ նեկով ի նոյնն զկենդակա հայրապետական պարզեանց և յղել մեք:

Բ. — Յղել ի վասն Սեւանայ ապաշխարութեան զերկտորն մասնակցող քահանայս, զՍեդրաք Ազարանեան և զԿէրթոք Միլրտուսեան: Զրկելով նոյնպէս ի Հայրապետական պարզեանց և յղելով մեք զկոնգրակալին:

Գ. — Արձակել զերեսփոխանս եկեղեցւոյն Ասորիսիս ի պաշտօննէն, նշանակել նոր քահանային, իրաւազորի առնելով զարձակեալս յոր և իցէ պաշտօննէն:

Կեղեցւոյ, քանի նորա ընտրեալք էին ի ժողովրդեն եկեղեցւոց և հաստատեալք ի հոգեւոր իշխանութենէ: Պարտ էր նոցա ոչ մասնակցել թարց հրամանի հոգեւոր բարձրագոյն իշխանութեան, և առանց համաձայնութեան ժողովրդեան, պահելով զերկիւր զմեք հաստատութիւն առ իրաւունքս եկեղեցւոյ որոյ հաստատեալ էր ծրարակալ ժողովրդին:

Դ. — Ջարմանակի թուեցաւ մեզ զի միեւնոյն ամսոյ թուականին նոյնպէս նոյն յանձնման գործ կատարեալ ի Ստարապոլ քաղաք: Ոչ զիտեմք տեղոյն քահանայն և երեսփոխ հեռագրաւ յայտնեցին ձեզ, ուստի արժան իսկ է դադարեցուցանել նոյնպէս ի քահանայագործութեանն զնազոյնն քահանայն Ստարապոլի, և նշանակել այլ քահանայ ի տեղի նորա: Եւ վասն երեսփոխանին նոյն կարգ և պատիժ սահմանել, որպէս երեսփոխանին Ասորիսիս, և զայս կոնգրակ մեր հրատարակել ի լուր պաշտօնէնց վիճակիք ի զգուշութիւն, որպէս և մեք տուաք զիտեալ այլոց թեմակալաց ի զիտութիւն և ի հրահանգութիւն:

ՄԻՆՏՈՒ ԿԱՅՐԱՊԵՏ  
Ամենայն Հայոց  
Օրոտոս 18, 1903  
Ի Սե. Եկեղեցւոյ, թիւ 990

## ԱՊԱԳԱՑ ԿԵԱՆՔԸ

Անոնք որ տեղեակ են հոգեբանութեան ամենամիտնական ճշմարտութեանց պէտք է խոստովանին թէ անկարելի է բացարձակ իրաւաստութիւն մընել հանդերձեալ կեանքի մը նկատմամբ: Այսու ամենայնօգտակարութեան զուրկ չենք համարիլ ըստարեւ ալ մի կարեւոր անձնագործութեան կողմանէ այդ մասին յայտնուած կարծիքը:

Ապագայ կեանքը, կ'ըսէ յիշեալ անձնագործութիւնը, պէտք է ըլլայ զիտակցող զիտակ է, այո, նա ունի իր արարքներուն զիտակցութիւնը: Նա կը յառաջդիմէ սոյն ներքին զիտակցութեան մէջ: Ձեռն կարծեմք թէ մարմնէն բաժնուիլ պիտի խափանէ այս զիտակցութիւնը, եւ աւելի կը հաւատամք թէ՛ այդ բաժնումն ալ աւելի պիտի աւելցնէ և զօրացնէ մարդու այդ յատկութիւնը: Այսու հանդերձ՝ ներքին զիտակցութիւնը հանդերձեալ կեանքին մէջ՝ պէտք է տարբերի այն զիտակցութեանն զոր ունինք հոս՝ ինչպէս հաստատեալ գեղձ մը կը տարբերի իր ծաղիկէն, կամ կոկոնէն կամ իր ծառին կեղեկէն, և կամ այն նախնական նիւթերէն որոնցմէ անկա կ'աճի: Մտնուիլ սահման մը չէ չարահաս մարդու մը, և ոչ ալ իմ ներկայ զիտակցութեան սահման մ'է՛ այն զիտակցութեան զոր պիտի ունենամ ավել ետքը:

Այդ կեանքը պէտք է ըլլայ ընկերային կեանք մը: Մեր բնութիւնը ընկերա-

կան է. մեր ուրախութիւնները ընկերական են: Մեր յառաջդիմութեան, և մեր երջանկութեան համար իրարմէ կախում ունինք հոս: Պէտք չէ՞ որ միեւնոյնը ըլլայ հանդերձեալ մէջ ալ: Ատիկա յառաջդիմութիւն մը և կատարելութիւն մը պէտք է ըլլայ մեր հոս ունեցած բնագործութեան և պարագայից վրայ: Բնութեան բոլոր նըմանութիւնները կ'ուսուցանեն զայս: Ձեռք գիտեր թէ ինչ ձև պիտի առնէ մեր գիտակցող և յառաջեալ ընկերային գործունեութիւնը: Ձեռք կ'ընար գիտնալ ատոր մասին աւելի քան ինչ որ զիտեցինք ծանրելէ առաջ այս աշխարհիս նկատմամբ — տեսնելու, հոտոտելու, լսելու, ճաչակելու, և զպղծելու մասին, և կամ այն բաներու մասին զորո անոնք երեւան կը հանեն: Մենք դեռ ծնած չենք այդ աշխարհին, և չ'ունինք ատոր զգայարարութիւնը: Սա զիտեցնէ թէ միեւնոյն ամենակողմէ, ամենազէտ, և ամենաբարի Աստուածը կը կառավարէ հոն ինչպէս հոս: Մ'ով չ'կրնար վտասիլ թէ նա պիտի ընէ ինչ որ ուզիլ է, և ինչ որ մեր ամենուն բարեւոյն համար է: Իմ կարգիս՝ եւ չեմ փափաքիլ գիտնալ թէ ո՞ր և ի՞նչ պիտի ըլլամ անի ետքը: Ես վտասեմ թէ ասիկա պիտի ըլլայ իմ ամենաճշմարիտ երջանկութեանս, և ամենուն ալ օգտին համար: Ես կը բաւականանամ սոյն վտասութիւնով:

Ապագայ կեանքը, սակայն պէտք է ըլլայ արիտաւոր կամ փոխարիտութեան վիճակ մը: Հոն կը տանինք ոչ այլ ինչ բայց միայն մեր անձը, մեր պարզ անհատականութիւնը: Մենք հոս կ'երթանք առանց զաւազանի և առանց մախաղի. ոչ ուրիշ բան այլ ինչ որ արդեամբ ենք: Մարդիկ ինչ վիշտ որ կը կրեն հոս՝ յաճախ իրենց անիրաւութեանց բնական հետեւնքն է. բայց այդ բոլոր վշտերը և չարարանքները մէյնէլ ողորմութիւններ են, — ողորմութիւններ որոնք նպատակ ունեն ընել զանոնք աւելի լաւ: Դիտելի է թէ ամէն բան այս աշխարհիս մէջ՝ յարմարեալ է աւելցնել Աստուծոյ արարածներուն բարութիւնը և երջանկութիւնը: Պէտք չէ՞ որ միեւնոյն բանը ըլլայ հանդերձեալ մէջ ալ: Յիշէ՛, աստուծոյ արարութիւնը մարդու արդարութեան չի նմանիլ. անիկա չէ թէ վրէժխնդրութիւն մը, այլ ողորմութիւն և կարեկցութիւն մըն է. ոչ թէ թոյն մը, այլ զեղ մը: Ինչ կը թուի թէ տակաւ աւելի հոգածութեան և ինձանց քան թէ պատիժի՝ բնոյթը ունի: Պէտք չէ որ նկատենք զԱստուած իբրև տիեզերքի բանտարկեալ, այլ մարդկութեան բարի հովիւր: ոչ թէ մեր գահիճը, այլ մեր մեծ թոյնը, այն՝ մեր երկնաւոր Հայրը: Անկարելի է ինչ վախճալ անիկէ՛ ինչպէս կը վախճում մարդոցմէ: Ձեռն կ'ընար զանոնք առնել սիրելի զայն. բոնքը ինչ որ կ'ունենք ըսել չ'կայ մարդոց որոնք մէջ աւելի խորունկ և աւելի զօրաւոր բան մը քան այն վտասութիւնը թէ նա պիտի ընէ անոնց համար ոչ ուրիշ բան այլ միայն բարիք: Մի խօսիլ ինչ Աստուծոյ վրէժխնդրութեանը վրայ,

և զմարդիկ պատժելուն մասին՝ իր փառացը համար: Չ'կայ այսպիսի բան մը: Մի խօսիլ ինչ նկատմամբ անվստահան զժողովրդին, ուր մարդիկ պէտք է տանովն տանուելու սիրոյն համար, դատապարտուած յատկանական թշուառութեան: Կ'ըսեմ՝ ձեզ չը կայ այսպէս բան մը, և ոչ ալ երբէք կըրնայ ըլլալ: Ձե՛ք մի որ նոյն իսկ վարձուած հովիւր՝ երբ մէկ հատ գառնուկը ուղիղ ճամբէն խոտորի՛ կը ձգէ իննսուն և ինը ապահով իրենց փարակին մէջ, և կ'երթայ փոթորկալից զիշեր մը փնտռելու մարդեալը: Եւ միթէ Աստուած պիտի մոռնայ և պիտի լքանէ՞ իր զիրագայթ կամ կամակոր մի զաւակը: պիտի ձգէ՞ զայն անվերջանալի թշուառութեան մէջ, որս մը մշտաթաղց մեղքին, այդ դժբանք և արեւնախանձ գայլին որ կը շրջի մարդկային փարակին շուրջը: Կ'ըսեմ՝ ձեզ ո՛չ Աստուած պիտի չ'ընէ այսպիսի բան մը:

Գարձեալ՝ մարդ մը որ հոս ապրած է առնական կեանք մը՝ պէտք է մտնէ հանդերձեալ կեանքին խիստ նպատաւոր պարագայից ներքեւ: Ձեռն կ'ընար հաստատել թէ ոչ և է վիճակ երկնքի մէջ՝ վերջնական վիճակ մ'ըլլայ, անիկա յառաջդիմական վիճակ մը ըլլալու է:

ՏՕՔԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ

Ամերիկայի Օրիոն Այիս Սոքոն հետեւեալ շքարեալիս Եւանջիլիոյ քրիստ և մեզի ի նրաստարակութիւն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄԵՐԸ (Friends of Armenia)

« Հայաստանի բարեկամները » անուն ընկերութիւն մը նոր կազմակերպուեցաւ: Ամերիկայի մէջ: Անոր նպատակն է լուրեր եւ տեղեկութիւններ տարածել հայկական խնդրին եւ հայերուն վրայ, ամերիկեան լրագրերուն միջոցաւ: Ընկերութեան նախագահն է Պ. Թիւրալ Վերտ Հալ: Գործնականագործներուն մէջ կան ակաւաւոր անձեր, եւ այլ մասնաբաժնեակաւ բըն եւ Ընկերութիւնը իբր անգամ ունի միայն ամերիկացիներ: Ինչպէս իր անունը կը ճշդէ արդէն, հայաստանի բարեկամները ընկերակցութիւն մըն է ան:

Ընկերութիւնը կարող է լայնօրէն շրջաբերել լուր եւ տեղեկութիւն, ամերիկեան մամուլին միջոցով: Բայց որպէսզի օգտակար ըլլայ ան, պէտք է որ շրջաբերելու լուր եւ տեղեկութիւն ունենայ, եւ ջերմապէս կը հրաւիրեմ բոլոր հայերն ալ որոնք կարող են ընկերութեան հայթայթել ամերիկեան հասարակութեան համար չանհկան թուող լուրեր եւ ընկերութիւններ հայկական գործերու մասին, ըլլայ թուրքոյ, Ռուսոյ կամ ուրիշ հայ գաղութի վերաբերեալ — որ հաճին այդ իրողութիւնները զրկել ինձի, որպէսզի ես կարող անամ հրապարակել ատոր ամերիկեան լրագրերու միջոցաւ: Նպատակնս է հայերը եւ հայկական խնդիրը լաւագոյն կերպով ճանչցնել սալ ամերիկեան հասարակութեան:

Եթէ այդ լուրերը կը զրկուին ինձի անդրիբէն կամ քրտնաբերեն, եւ ինչու կ'ընամ կարգալ: Եթէ հայերէն, թուրքերէն կամ ռուսերէն

ևս բազմաթիւ հայ բարեկամներ ունիմ որոնք պիտի թարգմանեն ինծի համար :

Կը խնդրուի որ խնամք ատրուի որ բոլոր լուրերն ալ հասարակագէս ստոյգ ըլլան : Եթէ մենք լուրեր հրատարակենք, որոնք յետոյ ան-րատոյց գտնուին, մեր ընկերութիւնը վատկարկել կ'ընայ :

Այն հայ խմբագիրները որոնք կ'ունեն որ-նեւ մեր այս ճիգերուն, կը խնդրուի որ խըր-կեն ինծի իրենց թերթերը : Կը հրաւիրենք նաեւ որ ընկերութիւններ ու անհատներ ալ թղթակցին մեզի : Տեղեկութեան աղբիւրը գաղտնի կը պահուի, եթէ պահանջուի :

Այս ընկերութեան արդիւնաւորութիւնը կտրուած պիտի ըլլայ գրեթէ ամբողջակօ ա-ջակցութեան առիտը որ մեր հայ բարե-կամներ մեզի պիտի ընծայեն լուրեր ձեռք բե-րելուն մէջ :

ALICE STONE BLACKWELL  
45 Bontwell Avenue  
Dorchester, Mass. (U. S. A.)

ՆԱՄԱԿ ԳՈՂԻՐԷԷՆ

ՇՆՈՐԱՅԱՎԱԼԻՐ

« Արշալոյս »-ի Պատ. Խմբագրութեանը կը խնդրուի որ հետեւեալ երկուողը հրատարակու-ընոր՝ ընէ :

Ներկայ տարուայ Յունիս եւ Յունիս ամիւ-ններուն մէջ անտանելի հիւանդութեամբ մը առ-ապակով ինքզինքս Ազն. Տր. Յ. Ն. վրայ գի խը-նամոցը յանձնեցի :

Միջ ուրաջ եմ յայտարարելու թէ՛ Ազ-նիւ Տօթթէօրին հիւանդութեան եւ ճարտար խը-նամքներուն չնորճի՛ գրեթէ մահուանէ ազա-տած ըլլալով կը փութամ իմ չնորճակիքս յայտնել հրատարակու Մեծայար Տր. Յ. Ն. վ-րայդ :

Բնդունեցէք եւս .  
ՄԱԼԻՍԱ ՃՈՂԱՆՆԷՍԵԱՆ

ՄԱԿԵՂՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլիս 21 Հոկտ. — Շատ լրագիրներ յայտարարութիւն մը հրատարակած են, ու-րով իբր թէ հրաման տրուած ձերբակալու-ում ըլլալ Պոլիսի բնակիչները հրոցանի բռնել : Այս յայտարարութիւնը ի հարկէ շատ չա-փազանցուած է, սակայն յայտնի կ'ընեն ի՛ր զէնքը ձեռք բռնուած ասպետներու գէ՛մ խիստ միջոցներ պիտի գործադրուին :

Մալմիսի 22 Հոկտ. — Երեքշաբթի գի-շեր ասպետները Ռազլոկի եւ ձուճապա-զարի օստիկանական եւ քաղաքագետական օտաներուն վրայ ռումբեր ձգած են : Չին-ւորները եւ ժողովուրդը 35 հոգի ռումբ ձգողներէն սպաննեցին : ձուճապազարի ե

Թ Ե Ր Թ Օ Ն Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս Ի

(21)

ՍԵՒ ԱԳԱՄԱՆԳԸ

Հեղինակ ԲԻԷՌ ՍԱԼ

ՄԱՍՆ ԵՐԹՈՐՈՒՄ

ԴԼՈՒՍ Ա.

ՏԻՏԻԷ ՏԸ ՊՈՒՐԿՎԷԷՐՈ

Պ. Կիլիսի Լարախուճա՛ աւելի մտաւոր-ընթացան մէջ ինկած էր, Կալիսի Ռիւֆֆէզի Հովիւ միկնելէն ի վեր : Մինչդեռ անոր հետ մինչեւ Ալէն-Լազարի կայարանը ընկերանալով գայն ճամբու գնելէն յետոյ, ուրախութեան շարժում մը ըրած էր :

— Ամէն բան կարգին է, կ'ըսէր ինքնիրեն իր գրասենեակը գառնալով, իմ տուեալստի մէ-ջէն արդէն սուածէս աւելի բան մը տալ չ'իսա-տացայ անոր. եւ եթէ Տանիէլ ստուգու. Հալի կը գտնուի. Կալիսի անոր պատճառած հոգիքէն պիտի ազատէ զիս : Ուրեմն իմ երջանկութիւնս խանգարող բան մը չ'գտնուի, իսկ Կալիսիին

Տէմիրհիտարի մէջ հեռագրական թեւերը, որոնք կտրուած էին, նորէն հաստատուե-ցան : Ապահովութեան համար Մալմիսի եւ Տէտէպազնի մէջ երկաթուղու գնացքները միայն չերեկ տեղի կ'ունենան : Լուր տա-րածուած թէ Ստրաֆօլ միայն է Ձօնչէ-վին :

Սօֆիա 22 Հոկտ. — Ձօնչէվի առաջ-նորդութեամբ Սեւանիկի մօտ ծաղած ա-պրատամբութիւնը, որ իշխանութիւնները զուտած կը համարէին, ընդհակառակը ա-ւելի լայն ծաւալ կ'ունենէ :

Կը հաստատեն թէ՛ հարաւային կողմը, Տէմիրհիտարի կայարանին մօտ եւ հիւսիսա-յին կողմը՝ դէպի Ռազլոկ, պոլիսիական սահմանի մօտ, արեւմտահեղ կախիւններ տեղի ունեցած են : Թեղանօթները գործածուած եւ անտաններու մէջ կրակ ձգած են : Ձօն-չէվի տրամադրութեան տակ կան 7000 հը-րացաններ, Մանասթր վիլայէթի սահմանա-գրքի մօտերէն վաշտի մը տեղափոխու-թիւնը պիտի սկսի այս գիշեր : Երկու ալ-պանական ջորայններ երկաթուղով Մեղ-րուիցայ եւ Ազրբայճան պոլիսի փոխադրուեցան :

Սօֆիա 22 Հոկտ. — Բազաքական գը-րութիւնը փոխուած չէ եւ հաւանական է որ ոչ մի փոփոխութիւն ալ չ'կրէ, մինչեւ որ երկու կայարաններ մէջ հզամ Վիեննայի խորհրդակցութեան արգիւնքը յայտնի չ'ը-լլայ : Պ. Նաչէվիչը, որ վաղը Կ. Պօլիսէն պիտի մեկնի, տեղեկագրեր ստացած է երկուքը-Քէօզլի մէջ սկսած կարծիքներու մասին :

Փրանսուս Ժօզֆին եւ Չարի խօսակցու-թիւնները հասարակութեան կարծիքին ո՛ր եւ է միեմարութիւն չեն տար :

Սօֆիա 27 Հոկտ. — Կ'ըսեն որ թուր-քիան եւ Պոլիսիական հատճանքած են սահ-մաններու վրայի ջորքերը եւ քաշելու մա-սին : Պոլիսիական 20000 զինուոր պիտի զը-կէ իրենց տեղերը, իսկ թուրքիան՝ 40000 : Կը պատմեն նաե՛ որ Լանստաուն Լորտի Ռուսիայ եւ Աւստրիայ ըրած առաջարկու-թեան մէջ յիշատակուած են քանի մը կէ-տեր. այսինքն սուլթանէն անկախ քրիստոն-եայ կառավարի մը հաստատուիլը եւ Մա-կեդոնիայ թուրք զօրաց օտարագրի հրա-մանատարի նշանակելը : Կարօտեալներուն օգնութեան հասցնել եւ միջազգայն ճիշ-տ պատասխան Թանճաթուղի մը հսկողու-թեան տակ տեղերու գիւղերը վերանո-րոցել :

Լոնտոն 29 Հոկտ. — Հոկտ. 33 ին ցերեկ ժամանակ թուրք զօրացուող մը Քիւս-թիէնի մօտ սահմանը անցնելով յարձա-կած է պատկէշի մը վրայ եւ գիւղը կողոպ-տած է : Պոլիսի վաշտի մը մօտենալը տես-նելով թուրքերը եւ քաշուած են 3 սպան-նէի եւ ժամանակ կորսնցնելու ալ չ'ըր գար, այդ մասին յետոյ պիտի խօսուի քիզի :

Նրաւ ձգելով, Պոլիսիաներէն մէկ վի-րաւոր կայ :

Կ. Պօլիս 29 Հոկտ. — Մակեդոնական փախուտականներու Պոլիսիական ապաստա-նելու խնդիրը մտահոգութիւն կը պատճա-ռէ : Փախուտականները 20,000 հոգի են, ու-րոնցմէ 13,000 Ազրիանապոլսէն գալով, հաստատուած են Պուրկաղի մէջ : 7000 հո-գի ալ Մակեդոնիայէն գալով Քիւսթէնտի-լի, Տուպիցայի եւ Սօֆիաի մէջ հաստատ-ուած են : Ասոնք թիւը հեղհեղակ կ'աւել-նայ տիրող անապահովութեան պատճառով, մանաւանդ Բէրիսի մէջ :

Պ. Նաչէվիչը եւ դուռը կը բանակցին ժողովուրդը հարկերի վերաբարձնելու մտ-սին. աւելի պարագայի մէջ Պոլիսիական շա-հաւոր է անսոյցմէ ապատուելուն համար, բայց թուրքիայ համար, բայց վերադարձի համար պէտք եղած ծախքերը հոգալին. նոր ապաստանութեան մը առիթը կ'ունայ ՂԼ-լալ ատիկայ : Գուռը հարկերի վերադար-ձաղններուն ընդհանուր ներդրութիւն եւ վը-նաններու փոխարէն հատուցում կը խօս-տանայ, բայց անոնք, զիս կատարածի հար-ուածներու տպաւորութեան տակ, եւ բա-րեւորագուցներու մասին ալ շատ կասկա-ծոտ, իբր երաշխաւորութիւն՝ միջազգային յանձնաժողով մը կ'ունենէ եւ եւ գրուած-տան մէջ ալ գտնուի մը. Խնդիրը ասոր վրայ է : Փախուտականները միայն եւրոպա-կան վերաբնութեան եւ քրիստոնեայ կա-ռավարչին վտանգութիւն կ'ընծային :

Կ. Պօլիս 30 Հոկտ. — Անգլիոյ դես-պանը կարեւոր տեղեկագրի մը տուած է գրան, Պէրիսի դաշնագրի յօդուածներուն անմիջական իրողորդումը պահանջելով եւ մանաւանդ այն յօդուածներուն, որոնք կը վերաբերին Ռուսիայի, Հայկական եւ նե-ղուցներու պաշտպանութեան : Կ'ըսեն որ Ռ-տալիոյ դեսպանն ալ նախ պահանջները պի-տի ընէ :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՉԱՐԻՆ ԴԼՄ

Հոռուի պաշտօնական թերթերը հրա-տարակած էին որ Պ. Ֆէրրի Չարին զէմ յայտարարութիւն չ'պիտի ընէ Գոյրացոյն-ձայնակողներուն հանդէպ : Անհամա-կարծիք ըլլալուն համար Պ. Ֆէրրի երբէք չէ մերժած յայտարարութիւնը : Անհամա-ձայն սօսիալիստները, որոնք պարագայը ինքն է, յայտարարութիւն մը պիտի խը-րագրեն եւ միջինները պիտի պատճառեն : Պ. Ֆէրրի յայտնած է որ սօսիալիստական գաղափարները հետզհետէ մուսը կը գտնեն

նաեւ ժողովուրդի ստորին դասակարգերուն մէջ ալ եւ յառաջիկայ ընտրութիւններու ժամանակ սօսիալիստները անշուշտ բազմա-թիւ տեղ պիտի գրաւեն :

ՄԱՆՁՈՒՐԻՈՅ ԳՈՐԾԵՐԸ

Լոնտոն 18 Հոկտ. — Տէյլի-Մէյը կը ծանուցանէ որ Ռուսիան ամսոյս 4ին յայ-տագիր մը տուած է ձարտին, որով կը յայ-տարարէ թէ նա ոչ մի իրաւունք չ'ունի Մանչեսթրի գործերուն մէջ խառնուելու եւ կ'առաջարկէ անոր Բօրէան բաժնեւ իրենց մէջ :

Լոնտոնէն 21 Հոկտ. թուականաւ կը ծանուցանեն :

— Ռիթէրի գործակալութիւնը Թօթթէն կը տեղեկանայ թէ Ռուսները մեծ խանդով կը պատրաստուին Բօրէալի զահմանազկի վրայ, Կարեւոր թերթերը պիտի չ'ունան շատ մտալ կը տեսնեն եւ տրամադիր են կար-ձեւու որ Ռուսիան դիտարարութիւն չ'ունի իր կրկնած խտտումները կատարելու : Այս պարագային պէտք է որ ձարտը վճարուան միջոցներու գիւղէ իր սեփական գոյութիւ-նը պահպանելու համար :

ՉԱՐԻ ՉԱՄԲՈՒՐՆԻՔԱՆ ՅԵՏԱԶԴՈՒՄԸ

Հոռուի մէջ 19 Հոկտ. թուականաւ կը հեռագրեն թէ՛ մեր Բէթրապուրիկի դեսպան կամ Մօրթան եւ կանուած է եւ պատեղի ուսուց դեսպանն ալ մեկնեցաւ այս գէպ-քերը որոշիչ են Չարի ճամբորդութեան յետաձգումէն ետքը, որ պատճառ է եղած Խոսիլոյ մէջ հետզհետէ աճող դժգոհու-թեան մը : Գահիլիքը սիւտի գուճարաւ խոր-տալուն համար թէ ինչ պէտք է ընել ար-տաքին գործոց նախարարի Բարիլէն վերա-դարձած ժամանակ :

ԻՌԱՆՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Լոնտոնէն 20 Հոկտ. թուականաւ կը հեռագրեն թէ՛

Տէյլի-Նիւյ կ'ըսէ որ կառավարու-թիւնը համաձայնութիւն գոյացուցած է Իւստիտացոց հետ, որուն համաձայն ինք պատճառութիւններ պիտի տայ Իւստիտայի բարձրագոյն կրթութեան գործի նկատմամբ եւ ի փոխարէն նոր ընտրութիւններու ժա-մանակ ազգայիններու պաշտպանութիւնը պիտի ստանայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՒՐ ԱՆԳՈՒՅՈՒՄ ԲԷՉ

Լոնտոնէն 25 Հոկտ. թուականաւ կը հեռագրեն :

Պ. Չէմպրէյն խօսելով Նիւ-քեմբրի մէջ՝ երկարորէն պատասխանած է իր հակառա-կախներու փաստերու գէ՛մ եւ մանաւա-րապէս Լորա Կոչնիլի եւ Լորա Ռօզպէրիի Իր Նախորդ ըսածները համառօտիւ կրկնելով

եւ անիւսլ էին եւ բնաւ կենդանութիւն չէին ցոյց տար, բայց միայն այն ատեն, երբ խաղի մէջ կը կորսնցունէր, միայն ճաշակաւոր կը հագ-ուէր ինչպէս որ կը վայելէ ներկայաւոր մար-դոց, Բնկերներ շատ ունէր, բայց Լարախուճա-էն զատ ուրիշ բարեկամ չ'ունէր եւ միայն ա-նոր առջեւ համարձակութեամբ կը խօսէր, վա-ճառականներ իր նկարագրի բացարձակութիւնը գործածելու առթիւ : Քիւրպի իր ընկերներէն եւ ոչ մէկը հանգիպած էր որ այդպէս անվայել գիրքի մէջ տարածուած ըլլայ, ինչ որ այդ վայրկեանին կիլիսի Լարախուճալի գարնանին ստարկան եղած էր :

— Պատուոյ վրայ, յարեց վաճառականը ծանրութեամբ, բազմոցին վրայ այդպէս տարած-ուիլը ձեզի շատ կը յարմարի :

— Ինչպէս որ ձեզի խոզապիտու փարա-սելը, ըսաւ Տիտիլ, եթէ Գլարան ձեզի այդ վիճակին մէջ տեսնէր, իմ խնդրաբեկումս . . .

— Կ'ուզէ՞ք պատասխանել ձեր Գլարանի հետ գնա երկէ՛ ձեր մօրաբնոյ զով ալ այդ նիւթին վրայ կը խօսէր. բայց զոմ վերջապէս օրին մէկը ամէն մարդ պիտի հասկնայ թէ՛ Գլարան իմ համաճանախ է . . .

— Ահաւասիկ ծաղիկի ( polichinelle ) գաղտնապահութիւն մը, ըսաւ Տիտիլ, բայց ձեր ազգանը աւարտեցէք, որ լրջօրէն տեսալ-ցինք ձեզի հետ :

(Շարունակելի) Թարգ. Ե. Թ. — ՎՐՈՅԸ

ունէի եւ ժամանակ կորսնցնելու ալ չ'ըր գար, այդ մասին յետոյ պիտի խօսուի քիզի :

— Տանիէլ՝ զէմ :

— Բնականաբար :

— Այն ատեն. նախաձայնից բըր՝ եւ յե-տոյ ամէն բան կը պատուէք ինծի :

Ապաստուր մը նախաձայնը բերաւ այնպէս, ինչպէս որ երբեմն Լարախուճա իր գրասենեա-կին մէջ սովոր էր առնելու. խոզապիտուի եր-կու լայն շերտիկներ եւ բանջարեղէնի բո-վիճեալ ( պահարկ ) ազգան մը, Միւսմիթի ա-նիւստուած պանիւր եւ լիթթօ մը գարեջուր :

Վաճառականը անմիջակաւ լափելի պատա-կերին ննջաւորաւ ակնարկներ նետելով իր ե-րիտասարդ բարեկամին, Տիտիլ վերստին սա-րածուած էր բազմոցին վրայ եւ ձեռնով հողե-պիլ կը գիտէր իր սիկարէն տրտաղուած ծուխի փոքրիկ ամպերը :

Իրարու հետ բարեկամութեամբ կապուած երկու հոգիներ երբէք այսչափ անհամանման եղած չեն միմեանց : Տիտիլ ալ Պուրկիլիտ շատ փոքր էր եւ բաւական մտիւր, սակայն իր կազմին համաձայն բարեձեւ. ցանցաւ մտքով մը ունէր եւ իր կոտանադոյն խարտեալ մտղերը ջոկա-գիծով մը իրարմէ զտուած էին զէպի ալ, իր զէմը որոշ արտասայտութիւն մը չունէր. միշտ ամբողջ եւ զուարտ սպաւորութիւն մը կը թու-ղուր նայողին վրայ. անոր փոքրիկ քիթը հա-կառակ զէպի ալ ունեւորած հակուսին, երբէք չէր խարշտփէր. իր այտերուն վրայ երբէք կարմը-րութիւն չէր նշմարուէր, աչքերը գորշագոյն



